ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐԻՑՅԱՆԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄԱՅԻԼՅԱՆ Ա. Ֆ.

Ալեքսանդր Դավթի Երիցյանը (1841-1902) XIX դարի հայ դասական խոշոր պատմաբաններից է: Նա հանդես է եկել առանձին աշխատություններով և մամուլի բազմաթիվ հրապարակումներով, որտեղ լուսաբանել է հայոց պատմության տարբեր հիմնահարցեր:

Ա. Երիցյանին հուզող խնդիրներից մեկն էլ այն էր, որ ժամանակի մամուլը Վենետիկի Մխիթարյանների մասին աղքատ տեղեկություններ է հաղորդում՝ չնայած հայության կյանքում միաբանության մեծ դերին: Այդ բացը լրացնելու համար Վենետիկի Մխիթարյան միաբանության պատմության լուսաբանմանն Ա. Երիցյանն անդրադարձել է «Արձագանքում» 1883 թ. հրապարակած ծավալուն հոդվածով և առանձին գրքով՝ «Վենետիկի Մխիթարյանք», որ լույս է տեսել նույն թվականին, Թիֆլիսում: Նա նշում է, որ անցյալ տարվա (1882 թ.) հուլիսի 2-ին Վենետիկի Մխիթարյան Ս. Ղազար վանքի հրդեհի հետևանքով ամենուրեք ցրված հայության ուշադրությունը ուղղվեց դեպի այն: Ա. Երիցյանը նաև դժգոհում է, որ եվրոպական մամուլը զլացավ դեպքի մանրամասնությունները հաղորդել և հայտնում է, որ վնասը մեծ չէ:

Հեղինակը գտնում է, որ չկա մի գրագետ հայ, որին ծանոթ չլինի Մխիթարյան միաբանության անունը և չկա մեկ այլ հիմնարկություն, որով կարողանայինք լուսավորյալ աշխարհի առաջ վերջին 150 տարվա ընթացքում ավելին պարծենալ: Նա գրում է, որ Մխիթարյաններն առաջինը եղան, որ Եվրոպային ծանոթացրեցին հայագիտության հետ, լույս աշխարհ բերեցին մոռացության տրված հայ ձեռագրերը, ոտքի կանգնեցրին մեր հին գրական լեզուն, նպաստեցին աշխարհաբարի առաջ գալուն և վարժեցրեցին հայերիս գիրք գնել, գիրք կարդալ, գիրք պահել:

Վենետիկի Մխիթարյանների 150 տարվա գործունեության մասին իր շարադրանքը Ա. Երիցյանը սկսում է Վենետիկի Ս. Ղազար վանքի հիմնադիր երջանկահիշատակ Մխիթար վարդապետ Սեբաստացու կենսագրությամբ: Նա գրում է, որ Մխիթար Սեբաստացու կենսագրությունը մեզ է հասել նրա աշակերտ Միքայել Չամչյանի, իսկ ավելի ընդարձակ՝ Ստեփանոս Գյուվեր Ագոնց արքեպիսկոպոսի շնորհիվ: Երկու հեղինակներն էլ, պատկանելով հայ կաթոլիկ համայնքին, Մխիթարի կաթոլիկության ջատագովն էին: Եվ հեղինակի խոսքերով՝ դրանով «*շատ կասկածելի են անում իրենց պատմութեան այս կետին վերաբերեալ մասերը*»[1]: Երկու հեղինակներն էլ Մխիթար Սեբաստացու մասին իրենց գրածով հանդես են եկել այն ժամանակ, երբ Հռոմը կասկածանքով էր նայում Մխիթարյանների կաթոլիկության վրա, իսկ միաբանությունը ջանք չէր խնայում պապին հավաստիացնելու, որ թե՛ իր հիմնադիրը և թե՛ միաբանները ջերմ կաթոլիկներ են:

[1] Արձագանք, 1883, N 35:

Մեկ այլ ճշգրիտ աղբյուր չունենալով՝ Ա.Երիցյանը բավարարվում է Մխիթարի կյանքի մասին Մ. Չամչյանի և Ս.Գ. Ագոնցի տված տեղեկություններով՝ ցույց տալով նաև դրանցում առկա կասկածելի կետերը:

Այնուհետև, Ա. Երիցյանը շարադրում է Մ. Սեբաստացու կենսագրությունը: Նա գրում է, որ Փոքր Ասիայի Սեբաստիա քաղաքում 1676 թ. փետրվարի 7-ին մի հայ գերդաստանում ծնվում է արու զավակ, որին ազգային եկեղեցու ծիսակատարությամբ մկրտելով՝ իր պապի անունով կոչում են Մանուկ: Հինգ տարեկանում նրան հանձնում են քահանայի՝ գրել-կարդալ սովորելու: Ա. Երիցյանը պատմում է Մանուկի մանկության և քահանա դառնալու նրա ցանկության մասին: Տասնհինգ տարեկանում Մանուկը մտնում է Սեբաստիայի մոտ գտնվող Ս. Նշան վանքը: 1691 թ. ձեռնադրվելով սարկավագ, փոխելում է անունը՝ Մխիթար: Այնուհետև Մխիթարն աշակերտում է Սեբաստիայում գտնվող Էջմիածնի նվիրակ Միքայել արքեպիսկոպոսին՝ տասներկու տարի ծառայելու նպատակով: Երկու ամսից նրանք մեկնում են Եվդոկիա, ապա Կարին, այստեղից էլ՝ Էջմիածին: Արքեպիսկոպոսը Մխիթարի հետ վարվում էր խիստ և հաճախ պատժում նրան: Դա չհանդուրժելով՝ Մխիթարն Էջմիածին ուխտի եկած իր ծանոթ Սեբաստացի Ստեփանոսի հետ փախչելով գնում է նախ Խոր վիրապը տեսնելու, ապա անցնում Սևան, իսկ այնտեղից՝ Երևան:

1693 թ. կեսին Մխիթարը, նպատակ ունենալով վերադառնալ հայրենի վայրերը, գալիս է Կարին և առժամանակ մնում ոմն Պողոսի տանը, որը եղել էր Հռոմում և, ինչպես երևում է, կաթոլիկության էր դիմել[2]: Այնուհետև Մխիթարը ուղևորվում է Հռոմ, բայց ճանապարհին հիվանդանում է: Ուղեկիցները, նրան թողնելով Կիպրոս կղզու հայոց ճգնավորաց վանքում, շարունակում են ճանապարհը[3]: 1695 թ. Մխիթարը վերադառնում է Սեբաստիա և երկար ժամանակ ապաքինվելուց հետո մտնելով Ս. Նշան վանքը՝ զբաղվում է Ս. Գրոց ընթերցանությամբ, իսկ 1896 թ. աբեղա է ձեռնադրվում: Արդեն այդ ժամանակ Մխիթարը ցանկանում էր գտնել համախոհներ և ստեղծել ընկերություն կամ միաբանություն: Այդ նպատակով 1700 թ. հուլիսին չորս աշակերտների հետ նա գնում է Կ.Պոլիս և այստեղ սկսում գրքեր հրատարակել[4]:

Քանի որ Մխիթարը կաթոլիկություն տարածելու պատճառով լուսավորչական եկեղեցու կողմից անընդհատ ենթարկվում էր հետապնդումների ու հալածանքների, իր աշակերտների հետ որոշում է տեղափոխվել ապահով տեղ և ստեղծել կաթոլիկ միաբանություն: Վճռում է գնալ Պելոպոնեսի Մորեա կղզին, որն այդ ժամանակ Վենետիկի հանրապետության տիրույթն էր: Երկար ճանապարհ անցնելուց հետո, 1703 թ. փետրվարին Մխիթարն իր տասնվեց աշակերտների հետ հասնում է Մորեա: Նրանք, տուն վարձելով, Մորեայում բնակություն են հաստատում:

---

[2] ***Երիցյան Ա.,*** Վենետիկի Մխիթարյանք, Թիֆլիս, 1883, էջ 7:

[3] Նույն տեղում, էջ 9:

[4] Նույն տեղում, էջ 10:Հենվելով Ղ. Ալիշանի և այլ հեղինակների տվյալների վրա՝ Ս. Չամուրյանը ցույց է տալիս, որ Մխիթարյան միաբանության սկզբնավորումը պետք է համարել 1700 թ. հուլիս-հոկտեմբեր ժամանակահատվածը (տե՛ս Չամուրյան Ս., Մխիթարյան միաբանության հիմնադրման թվականը և պարագաները, Բազմավեպ, 2001, N 1-4, էջ 82-98):

Ա. Երիցյանը ներկայացնում է Մխիթարի և նրա աշակերտների ջանքերը՝ մենաստան կառուցելու գործում: Գրում է, թե ինչպես 1705 թ. Մխիթարն իր աշակերտներ Եղիա և Հովհաննես վարդապետներին ուղարկում է Հռոմ՝ պապից հաստատության կոնդակ ստանալու, ինչպես նաև «***Ս. Անտոնի վանքական կանոնների վերայ հիմնուած մի սահմանադրութիւն կամ կանոնադրութիւն շինեց նա իւր միաբանութեան համար և յանձնեց գնացող վարդապետներին, որ այդ նս հաստատել տան»*** [5]: Հռոմի Կլիմենտ XI պապը (1700-1721), որը վճռական քայլեր էր ձեռնարկում միջազգային թատերաբեմում Հռոմի պապերի հեղինակությունը բարձրացնելու համար[6], խոստանում է գործի քննությունը հանձնել կարդինալների ժողովին: Ապա Ա. Երիցյանը նկարագրում է, թե ինչպես մեծ դժվարությամբ են Մխիթարը և իր աշակերտները Վենետիկին ենթակա Մեթոն բերդաքաղաքում կառուցում իրենց միաբանության շենքը:

Մխիթարի միաբանության հռչակն օրեցօր աճում էր, ինչպես նաև ավելանում էին նրա թշնամիները, որոնց մեջ կային թե՛ հայ լուսավորչականներ և թե՛ լատինացիք[7]: Հռոմի պապը չէր հաստատում միաբանության կանոնագիրքը՝ պատճառաբանելով, որ այն նման չէ ոչ մի վանական կանոնների: Մխիթարյանները ճարահատյալ որոշում են ընդունել Ս. Բենեդիկտոսի կրոնական կարգի կանոնները, որը և պապը հաստատում է և Մխիթարին մենաստանի աբբահայր նշանակում (1712 թ.): Ապա Ա. Երիցյանը գրում է 1715 թ. Վենետիկի հանրապետության և Թուրքիայի միջև ծագած պատերազմի պատճառով Մխիթարյանների՝ Վենետիկ մեկնելու մասին: Այստեղ Մխիթարը ձեռնամուխ է լինում միաբանության նոր շենք կառուցելու գործին և երկար փնտրտուքից հետո ընտրում է Ս.Ղազար կղզին, որը գտնվում է Վենետիկ քաղաքից մոտ մեկ մղոն հեռավորության վրա:

Մխիթարը շուրջ մեկ տարի զբաղվում է այդ գործով և 1717 թ. ստանում անհրաժեշտ հրամանը: Նույն տարվա սեպտեմբերի 8-ին՝ Աստվածածնի տոնի օրը, միաբանությունը Մխիթար աբբահոր առաջնորդությամբ անցնում է Ս. Ղազար կղզի: Ա.Երիցյանը նշում է, որ դա խորհրդանշական օր էր Մխիթարյանների համար, որովհետև նույն սեպտեմբերի 8-ին, 16 տարի առաջ հիմնվեց միաբանությունը և նույն սեպտեմբերի 8-ին, 14 տարի առաջ Մեթոնում հաստատվեց մենաստանը: «*Այդ հիման վրայ, Մխիթար աւանդեց ամէն տարի սեպտեմբերի 8-ին, Աստուածածնայ ծննդեան օրը, տօնել մենաստանիս հիմնարկութեան յիշատակը, որ և կատարվում է մինչև այսօր անխափան»* [8]:

Ա. Երիցյանը նաև նկարագրում է, թե ինչպես Հռոմում քննվեց Մխիթարյանների դեմ առաջադրված մեղադրանքը, ըստ որի, Մխիթարյան միաբանության որոշ գործիչներ կաթոլիկության սկզբունքներին տեղյակ չեն և

---

[5] Նույն տեղում, էջ 19:

[6] **Ковальский Ян Веруш,** *Папы и папство, М., 1991, с. 201:*

[7] ***Երիցյան Ա.,*** նշվ. աշխ., էջ 21:

[8] Նույն տեղում, էջ 26:

իրավունք չունեն պատարագ մատուցելու: Սակայն կարդինալների ժողովն արդար ճանաչեց նրանց և Մխիթարը Հռոմից վերադարձավ՝ պապից ընծաներ ստացած:

Հեղինակն, այնուհետև, պատմում է, թե ինչպես Մխիթարը կառուցեց միաբանության շենքը: Մխիթարը 1746 թ. հիվանդացավ: Չնայած նա բուժվում է, բայց շուտով նորից է հիվանդանում և գամվում անկողնուն: 1749 թ. ապրիլի 27-ին Մխիթարը մահացավ 74 տարեկան հասակում՝ 49 տարի վարելով վանահայրության պաշտոնը:

Ա. Երիցյանը տալիս է Մխիթարի բնութագիրը, վարքն ու բարքը, բարձր է գնահատում նրա ազգասիրությունը և գրական գործունեությունը: Ապա հեղինակն անդրադառնում է Մխիթարյանների հետագա գործունեությանը՝ նշելով, որ ի երախտագիտություն հիմնադրի՝ միաբանությունը կոչվեց «Մխիթարեանց ուխտ»:

Մխիթարի հաջորդ աբբահայրը Հ.Ստեփանոս Մելգոնյանն (1717-1799) էր: Նրա վախճանվելուց հետո 1800 թ. Մխիթարյաններն իրենց աբբահայր ընտրեցին Ստեփանոս Ագոնց վարդապետին (1740-1824), որը կրում էր Գյուվեր (Քէօվէր) մականունը[9]: Ա.Երիցյանը գրում է Հռոմի Պիոս VII պապի՝ միաբանություն այցելելու, Ագոնցին 1804 թ. Հռոմ հրավիրելու և «արքեպիսկոպոս Սիւնեաց աշխարհի» ձեռնադրելու մասին, չնայած այդ ժամանակ Սյունիքում ոչ մի կաթոլիկ չկար: 1824 թ. հունվարի 29-ին աբբահայր Ստեփանոս Ագոնց արքեպիսկոպոսը 84 տարեկանում վախճանվեց: Այնուհետև, 1824 թ. աբբահայր է ընտրվում Հասուն Սուքիաս Սոմալյանը՝ մինչև 1846 թ.: Նրան հաջորդում է Գևորգ Հյուրմյուզյանը: Ա. Երիցյանը տհաճությամբ է խոսում Սոմալյանի և Հյուրմյուզյանի պայքարի մասին և գտնում է, որ դրա հետևանքները ծանր էին միաբանության համար:

Գևորգ Հյուրմյուզյանին միաբանությունը մեծ խանդավառությամբ ընտրեց աբբահայր և «*այսպիսի ովսաննայական ընտրութիւն մ'անշուշտ մեծամեծ արդիւնքներ պիտի ծներ, եթէ սակայն կրօնական խնդիրներ չի գային կասեցնել միաբանութեան յառաջադեմ և ծաղկեալ վիճակը*»[10]: Չնայած իր աբբահայրության օրոք միաբանությունում ներքին անհամաձայնության և խռովության մթնոլորտ էր, այնուամենայնիվ, Գևորգ Հյուրմյուզյանը վայելում էր «*Եվրոպիոյ բարձրագոյն եկեղեցական շրջանակներուն համակրութիւնը, սէրն ու վստահութիւնն, որոնց թարգման կը հանդիսանար բարիգեան առաջնակարգ թերթերեն մին*»[11]:

Դիմելով Մխիթարյան միաբանության այդ ժամանակվա աբբահայր Հ. Իգնատիոս Կյուրեղյանին, որը Մխիթարյանների աբբահոր աթոռին էր բազմել 1878 թ. օգոստոսի 23-ին, Ա. Երիցյանը գրում է. «*Այսպիսի դժուար հանգամանքների մեջ ժառանգեց Մխիթարի աթոռը Ս.Ղազար վանքի ներկայ աբբահայր, որին ի սրտէ ցանկանում ենք չը հետևել նախորդի ընտրած խախուտ*

---

[9] Նույն տեղում, էջ 54:

[10] ***Հովհաննես Ալան,*** Մխիթարյանք գրականության հանդեպ 1701-1901, Վենետիկ, 1902, էջ 91:

[11] ***Երիցյան Ա.,*** նշվ. աշխ., էջ 91:

ճանապարհին՝ գեթ՛ի պատիւ իւր միաբանութեան»[12]: Նա գտնում է, որ Կյուրեղյան աբբահայրը «*խռովութեան և գրգռութեան դժուարին հանգամանաց մէջ ձեռք առաւ իշխանութեան դեկը»*[13]:

Նա հարկ է համարել նաև անդրադառնալ Մխիթարյանների այն ճյուղին, որը Մելգոնյան աբբահոր կամակորությունը պատճառ բռնելով՝ 1773 թ. բաժանվեց Ս. Ղազարի վանքից: Շուրջ 15 վարդապետներ Աստվածատուր վարդապետ Բաբիկյանի գլխավորությամբ փոքրիկ ընկերություն հիմնեցին Տրիեստ քաղաքում (1811)՝ ապավինելով ավստրիական Մարիա-Թերեզա կայսրուհու պաշտպանությանն ու օգնությանը:

Ա. Բաբիկյանը Հռոմի աջակցությամբ 1800թ. ձեռնադրվեց արքեպիսկոպոս: 1802 թ. Տրիեստի ընկերությունը դարձավ անկախ աբբայություն և Ա. Բաբիկյանն ընտրվեց աբբահայր: Ֆրանսիացիները, 1807 թ. մտնելով Տրիեստ, մյուս կաթոլիկ վանքերի նման աբբայությունն էլ կողոպտեցին, և միաբանները փախան ու ցրվեցին: Ա. Երիցյանը գրում է, թե հայտնի է, որ կղերականների թշնամի Նապոլեոնը բոլորովին հակառակ վարվեց Ս. Ղազարի վանքի հետ: Ցրելով Վենետիկի բոլոր կաթոլիկ կղերին՝ նա միայն հիշյալ հայկական վանքին ապահովության արտոնություն տվեց: Տրիեստի հայ կաթոլիկ վարդապետները 1811 թ. տեղափոխվեցին Վիեննա, ուր Ավստրիայի Ֆրանց կայսեր հովանու ներքո հաստատեցին իրենց վանքը: 1825 թ. ապրիլի 18-ին Ա. Բաբիկյանը վախճանվեց, և նրան փոխարինեց Արիստակես վարդապետ Ազարյանը: 1855 թ. մայիսի 6-ին Ա. Ազարյանը մահացավ, և 1855 թ. օգոստոսի 16-ին Վիեննայի Մխիթարյանների աբբահայր ընտրվեց Հակոբ վարդապետ Պոզաճյանը: Ա. Երիցյանի խոսքերով, «*Սորա ժամանակ արդէն ընկաւ Վիէննայի միաբանութիւնը թէ ազգի աչքում և թէ ընդհանրապես ամբողջ լուսավորեալ աշխարհի առաջ...»*[14]: Դրվատելով թե Վենետիկի, թե Վիեննայի Մխիթարյանների մշակութային գործունեությունը՝ Ա. Երիցյանը տհաճությամբ և քննադատորեն է վերաբերվում միմյանց հանդեպ նրանց տածած թշնամանքին:

Ա. Երիցյանը տպագրության բնագավառում Վենետիկի Մխիթարյանների կատարած հսկայական աշխատանքը համեմատում է Վիեննայի Մխիթարյանների նույն բնագավառի գործունեության հետ: Նա բարձր է գնահատում Մխիթարյանների գործունեությունը և անդրադառնում աշխարհագրության, լեզվագիտության, պատմության և այլ բնագավառներում այդ միաբանություններում ստեղծված մի շարք բարձրարժեք աշխատությունների: Նա հատկապես արժեքավորում է Մխիթարյանների դերը Հայաստանի աշխարհագրության, հայոց լեզվի, քերականության, պատմության, ազգագրության և մի շարք այլ հարցերի լուսաբանման մեջ, ինչպես և Մխիթարյանների թարգմանությունները ֆրանսերենից, անգլերենից և իտալերենից:

---

[12] Նույն տեղում, էջ 73:
[13] Նույն տեղում, էջ 93:
[14] Նույն տեղում, էջ 76:

Մխիթարյան միաբանությունը, ըստ հեղինակի, վերելք ապրեց ժամանակի հայ առաջնակարգ մշակութային և գիտական այնպիսի գործիչների շնորհիվ, ինչպիսիք են Գ. Ավետիքյանը, Մ. Չամչյանը, Հ. Ավգերյանը, Ղ. Ինճիճյանը, Մ. Ջախջախյանը, Ե. Թովմաճանը, Ղ. Ալիշանը, Գ. Զարբհանալյանը և ուրիշներ:

«*Վերջացնելով Վենետիկի Մխիթարեանց գործունէության համառօտ տեսութիւնը,*- գրում է Երիցյանը,- *Մենք ամենևին չը յիշեցինք հանրածանոթ «Բազմավէպը», այլոց թողնելով սորա քառասնամեայ անընդհատ հրատարակութեան վրայ խօսելու պատիւը*»[15]:

Ինչպես նշվեց, Ա.Երիցյանի նպատակը եղել է իր ժամանակակիցներին ծանոթացնել Մխիթար Սեբաստացու և նրա հաջորդների կյանքին և գործունեությանը՝ ցանկանալով լրացնել ժամանակի գրականության մեջ եղած բացը: Սակայն Ա. Երիցյանը խոստովանում է, որ այս աշխատանքի ընթացքում հանդիպել է դժվարությունների և, գուցե՝ ակամա, զերծ չի մնացել սխալներից: Նա գտնում է, որ այսպիսի մի գործ պետք է ձեռնարկվեր հենց Ս. Ղազարի վանքում, քանի որ անկարելի է տալ Մխիթարյանների լիարժեք պատմությունը՝ ձեռքի տակ չունենալով միաբանության դիվանը: Հետևաբար, անհրաժեշտ է, որ Մխիթարյանները, ձեռքի տակ ունենալով բոլոր անհրաժեշտ փաստերը, համապարփակ ու անաչառ շարադրեն իրենց միաբանության պատմության և դրական, և բացասական կողմերը:

Ա. Երիցյանը մեծ դժգոհություն է հայտնում, որ Մխիթարյանների ներկա սերունդը կաթոլիկ մյուս վանքերի հետ ձեռք ձեռքի տված «*դիմում են մահմետական տերութեան մեջ անտեր անտիրական հայերին որսալու*»[16]:

Բարձր գնահատելով Մխիթարյանների դերը հայ ժողովրդի մտավոր և մշակութային կյանքում՝ Ա. Երիցյանը մեծ հիացմունքով է խոսում նրանց մասին՝ միաժամանակ նշելով նրանց առանձին սխալները և թերացումները: Նա հատկապես տհաճությամբ է վերաբերվում միաբանության ներքին հակասություններին և երբեմն միմյանց դեմ մղվող անզիջում պայքարին: Ա. Երիցյանը, մեծ նշանակություն տալով բնական գիտություններին, կշտամբում էր Մխիթարյաններին՝ այդ ուղղությամբ ոչինչ կամ համարյա ոչինչ չանելու համար: Նա ցույց է տալիս, «*որ նրանք հայ պատմիչների գործերը տպագրում են աղավաղումներով, դուրս գցելով այն, ինչ իրենց դուր չի գալիս, որ նրանց կազմած քերականությունը անմատչելի է երեխաների համար*»[17]:

Ա. Երիցյանն իր աշխատության վերջում նշում է այն աշխատությունները, որոնք լույս են տեսել միաբանությունում՝ բարձր գնահատելով դրանք որպես գիտության և մշակույթի մնայուն արժեքներ: Այսպիսով, իր արժեքավոր աշխատության մեջ Ա.Երիցյանը փորձում է մոտո ծանոթացնել հայ ընթերցողին

---

[15] Նույն տեղում, էջ 150:

[16] Նույն տեղում, էջ 151:

[17] ***Համբարյան Ա.,*** Ալեքսանդր Երիցյան (Պատմա-բանասիրական հանդես, 1960, N 1, էջ 186):

Վենետիկի Մխիթարյան միաբանության անցած ուղուն, մի հաստատություն, որի դերը մեծ է եղել հայ ժողովրդի համար՝ գիտության և մշակույթի զարգացման գործում:

АЛЕКСАНДР ЕРИЦЯН О КОНГРЕГАЦИИ МХИТАРИСТОВ ВЕНЕЦИИ

МАИЛЯН А. Ф.

Резюме

Известный армянский историк XIX в. А. Ерицян является автором пространных исследований и многочисленных публикаций по истории Армении, армянской церкви и национальной культуры.

А. Ерицян занимался также изучением истории конгрегации мхитаристов. В этой связи в 1883 г. в Тифлисе на страницах периодического издания ,,Ардзаганк" им был опубликован ряд статей, а также была издана книга ,,Мхитаристы Венеции".

А. Ерицяном была дана высокая оценка роли мхитаристов в развитии арменоведения и армянской культуры.